ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի № 424-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱԿՈՒՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման № 1 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի ապրիլի 30-ի № 190-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. ***Շուշանիկ Արամայիսի Մուրադյանին*** 2024 թվականի հոկտեմբերի 29-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից:

2. ***Շուշանիկ Արամայիսի Մուրադյանին*** 2024 թվականի հոկտեմբերի 29-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով *(տնօրենի թափուր պաշտոնում)* պաշտոնի նշանակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հոկտեմբերի 29
ք. Հրազդան